600.0073.24.10.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2003 թվականի №73Ա
ք. Երևան

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

ա) 2003-2004 թվականների ձմռան ժամանակաշրջանում ջերմային էներգիա մատակարարող ընկերությունների կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման հետևյալ սակագները՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

N	Ընկերության անվանումը	Ջեռուցման տևողությունը (օր)	2003-2004 թվականների սակագները		
			Բնակչության ջեռուցման համար		Այլ սպառողների ջեռուցման համար (դրամ/ԳՋ)
			(դրամ/մ^2)	(դրամ/ԳՋ)	
1	Երևանի քաղաքապետարանի «Ջերմային տնտեսություն» պետական փակ բաժնետիրական ընկերություն	90	1870	3293	3293
2	«Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերություն	90	1605	2826	2826
3	«Գյումրու ջերմամատակարարում» փակ բաժնետիրական ընկերություն	120	2596	2520	2520
4	«Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության-ի «Գյումրիջերմո» մասնաճյուղ (գ. Մայիսյան)	120	1505	1951	-
5	«Հրազդանի քաղաքային համայնքի ջերմամատակարարման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություն	120	1667	2006	2006

բ) 2003-2004 թվականների ձմռան ժամանակաշրջանում «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրիջերմո» մասնաճյուղի կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 2040 դրամ/ԳՋ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) 120 օրվա համար.

գ) 2003-2004 թվականների ձմռան ժամանակաշրջանում «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 1714 դրամ/ԳՋ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) 120 օրվա համար:

2. Հաշվառքի սարքերի բացակայության դեպքում, բնակչությանը առաքվող ջերմային էներգիայի հաշվարկման համար, կիրառվում է մեկ մ^2 բնակելի մակերեսի համար սահմանված սակագինը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2003 թվականի նոյեմբերի 24-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱՋԱՐՅԱՆ**

ք. Երևան
24 հոկտեմբերի 2003թ.
ժամը $16^{\underline{00}}$